ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ԵՐԿՈՒ ԳՐՔԵՐԸ
SPECIAL TOPIC: THE TWO BOOKS OF GOD

Ա. Աստված հայտնել է Իր մասին երկու կերպ՝
1. բնության (այսինքն՝ ստեղծագործության, տես՝ Սաղմ. 19:1-6, որը կոչվում է «բնական հայտնություն»)
2. Սուրբ Գրքի (տես՝ Սաղմ. 19:7-14, կոչվում է «հատուկ հայտնություն»)
   Ահա թե ինչու ես չեմ կարծում, որ պետք է գիտության և հավատքի միջև ի վերջո ընդհարում լինի, քանի որ ամբողջ ճշմարտությունը Աստծո ճշմարտությունն է: Խնդրում եմ նայեք Ծննդոց 1-11 գլուխների իմ մեկնությունները առցանց և անվճար հետևյալ հղումով՝ www.freebiblecommentary.org

Բ. Դան. 7:10 և Հայտն. 20:12-ում նշվում են երկու գրքեր:
1. «Գործերի գիրքը», որը պարունակում է մարդկանց բոլոր շարժառիթներն ու գործերը՝ թե՛ լավ և թե՛ վատ: Ինչ որ իմաստով սա Աստծո հիշողության նկարագրություն է և որ մի օր բոլոր մարդիկ հաշիվ են տալու իրենց Արարչին կյանքի պարգևի իրենց տնտեսության հարցում:
   ա. Սաղմ. 56:8, 139:16
   բ. Եսայի 65:6
   գ. Մաղաքիա 3:16
   դ. Հայտնություն 20:12-13
2. «Կյանքի Գիրքը» թվարկում է նրանց, ովքեր զղջացող, հնազանդ հավատքի փոխհարաբերություն ունեն ՅԱՀՎԵԻ՝ Հիսուսի հետ: Սա Աստծո հիշողության նկարագրությունն է այն մարդկանց համար, ովքեր փրկված են և երկնքով կապված:
   ա. Ելից 32:32-33
   բ. Սաղմ. 69:28
   գ. Եսայի 4:3
   դ. Դանիել 12:1
   ե. Փիլիպպեցիների 4:3
   զ. Եբրայեցիների 12:23
   է. Հայտնություն 3:5, 13:8, 17:8, 20:12, 15, 21:27
   ը. նաև նշվում է 1 Ենովք 47:3, 81:1-2, 103:2, 108:3-ում

Այս գրքերը ներկայացնում են Աստծո հավատարմությունը Իր Խոսքին: Նրանք, ովքեր ապստամբում են և մերժում, Նա հիշում է նրանց մեղքերը. նրանք, ովքեր ապաշխարում են, հավատում, հնազանդվում և հարատևում, Նա մոռանում է նրանց մեղքերը (տես՝ Սաղմ. 103:11-13, Եսայի 1:18, 38:17, 43:25, 44:22, Միքիա 7:19): Սա տալիս է մեծ երաշխիք և վստահություն Աստծո անփոփոխ, ողորմած բնավորության, Նրա խոստումների և հոգածության վրա: Աստված վստահելի է: Այն ինչ Նա հայտնել է Իր մասին ճշմարիտ է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (ՀԿ)
ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔ
ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԱՏԱՍՏԱՆԸ ՆԿ-ՈՒՄ